ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

2021 Հայաստանի Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2018- 23.03/219
23.03.2018թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Հարություն Սարգսյանին

Հարգելի պարոն մարզպետ,

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ «2012 թ. մարտի 6-ին ՀՀ Սահմանադրական դատարանը[1] «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «Զ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշման 2-րդ կետով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասը՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը՝ այնքանով որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, ճանաչել ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել **<u>ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից սահմանված գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի պատճենը:</u>**

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

ICA Vanadzor
C6526024

Կատարող՝ Հ. Հակոբյան
Էլ հասցե՝ hhakobyan@hcav.am
Հեռ.՝ 094042268

[1] Տես՝ http://www.concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1010.pdf

Հ. Հ. 1802
28.03.2018